# ՍՏԵՓԱՆ ՇԱՀԲԱԶՅԱՆ

(Մենդլան ուրսուճամյակի առթիվ)

Ա. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

*Սփյուռքահայ աշխատավոր դանդվածների շարքերից ելել են բազմաթիվ առաջադեմ գործիչներ, որոնց անցած ուղին արժանի է պատմաբան-հետազոտողների ուշադրության։ Առանձնապես կարևոր է ուսումնասիրել սփյուռքահայ այն մարտիկների կյանքն ու գործունեությունը, որոնք դաստիարակություն ստանալով և կոփվելով եղբայրական կոմունիստական պարտիաների շարքերում, նվիրաբերել են իրենց կյանքը ժողովուրդների ազատագրման պայքարին։*



*Այդ գործիչների թվին է պատկանում Ստեփան Շահբազյանը։ Նրա մասին գրված են մի շարք հոդվածներ[1]։ Բարձր գնահատելով այդ հոդվածների նշանակությունը Ստ. Շահբազյանի հիշատակը հավերժացնելու գործում, բաստիրված ենք, այնուամենայնիվ, նշել, որ դրանք իրենց փաստացի նյութով հեռու են Ստ. Շահբազյանի կյանքի ուղին լրիվ պատկերելուց։ Նման հավակնություն չունենք և մենք։ Սակայն պետք է նշենք, որ այս հոդվածը Ստեփան Շահբազյանի փոքրիշատե ծավալուն և ամբողջական կենսագրականի հիմքը ստեղծելու առաջին փորձն է։*

*Ստեփան Շահբազյանը Բուլգարիայի կոմունիստական պարտիայի ակտիվ գործիչներից մեկն էր, բուլգարահայ աշխատավորների շրջանում ազատագրական և կոմունիստական շարժման տաղանդավոր և փայլուն կազմակերպիչն ու ղեկավարը։ Նրա ամբողջ կյանքը սոցիալիզմի գործին, բանվոր դա-*

---

[1] *Տե՛ս* Գրիգոր Հիշմանյան, *Ստեփան Կ. Շահբազյան (մահվան 35-ամյակի առթիվ), «Երևան» թերթ (Սոֆիա), 1958, սեպտեմբերի 19։* Մ. Իվանով, *Առնական մարտիկ և հայրենասեր, «Երևան» թերթ (Սոֆիա), 1957, մայիսի 10։* Դերենկուհի Մինասյան, *Պարտիայի հարազատ զավակը, «125 տարի ի սպաս ժողովրդական լուսավորության» ժողովածու, Պլովդիվ, 1959, էջ 28–29։* Ружа Шахбазян, Видни пловдивски политически дейци. Степан Шахбазян, „Пловдив" *ամսագրում, 1955, № 4, էջ 10–13 և մի քանի այլ հոդվածներ։*

սակարգին և պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներին հավատարմորեն ծառայելու կենդանի օրինակ է։

Ստեփան Շահբազյանի աշխարհայացքի ձևավորումը տեղի է ունենում Բուլգարիայում, Պլովդիվ քաղաքում, XIX դարի վերջում։ Դարաշրջանը և միջավայրը այդ ձևավորման որոշիչ գործոններն են։ XIX դարի երկրորդ կեսը Բուլգարիայի պատմության մեջ նշանավորվեց կապիտալիստական հարաբերությունների զարգացմամբ, բանվոր դասակարգի և արդյունաբերական կենտրոնների ձևավորումով։ XIX դ. վերջից սկսվում է բուլգարական բանվորական և սոցիալիստական շարժումը, որը կապված է Դիմիտր Բլագոևի անվան հետ։ Դ. Բլագոևը կազմակերպում է սոցիալիստական առաջին խմբակները, իսկ 1891 թ. հիմնադրում է Բուլգարական սոցիալ-դեմոկրատական պարտիան (ԲՍԴՊ)՝ բուլգար պրոլետարիատի ռևոլյուցիոն մարքսիստական պարտիան, որը 1894 թ. վերանվանվում է Բուլգարական բանվորական սոցիալ-դեմոկրատական պարտիա՝ ԲԲՍԴՊ։

1893—94 թթ. սկսվում է բուլգարական բանվորական շարժման ակտիվացումը, տեղի են ունենում առաջին կազմակերպված գործադուլները։ Բուլգարիայի բանվորական կարևոր կենտրոններից մեկն էր Պլովդիվ քաղաքը։ Պատահական չէ, որ այդ քաղաքի հետ է կապված Դ. Բլագոևի կյանքի ու գործունեության համարյա քսանամյա (1885—1903) մի շրջան[2]։ 1904—1919 թթ. Պլովդիվում ապրում և տեղի պարտիական կազմակերպությունն էր ղեկավարում նաև Բուլգարական կոմունիստական պարտիայի մարտական առաջնորդ Վասիլ Կոլարովը։ Պլովդիվը բազմազգ, իսկական բանվորական քաղաք էր, պրոլետարական դասակարգային պայքարի հիանալի դպրոց ամեն մի ռևոլյուցիոների համար։ Վ. Կոլարովը, հետագայում վերհիշելով իր աշխատանքը Պլովդիվում, ասում էր «Ես շատ բանով եմ պարտական Պլովդիվի աշխատավորներին։ Ինձ համար դա ժողովրդական մի համալսարան էր»[3]։

Պլովդիվը միաժամանակ բուլգարահայ գաղութի կենտրոնն էր, որի վրա, բնականաբար, չէր կարող չանդրադառնալ երկրում տեղի ունեցող կապիտալիզմի զարգացման ընդհանուր պրոցեսը։ Պլովդիվի բազմազգ պրոլետարիատի շարքերը համալրվում էին նաև հայ բանվորների գանգվածներով։ XX դարի սկզբին արդեն քաղաքում կար հայ բանվորների զգալի մի խավ՝ յաղմաջիներ, ծխախոտագործներ, կաշվի արդյունաբերության բանվորներ, որոնք աշխատում էին քաղաքի գործարաններում ու ֆաբրիկաներում բուլգար, հույն, թուրք և այլ ազգերի բանվորների հետ կողք-կողքի։

XIX դարի վերջում արդեն Պլովդիվի հայերի շարքերից դուրս են գալիս սոցիալիստական առաջին գործիչները։ 1896 թ. Փարիզից Պլովդիվ է վերադառնում Տիգրան Բամիյանը՝ Պլովդիվի պրոլետարիատի ամենաժողովրդական և հմայիչ ղեկավարներից մեկը, Բլագոևի և Կոլարովի մտերիմ բարեկամը, որին քաղաքի պրոլետարիատը Զիշո (Քեռի) անունն էր տվել[4]։

Այսպիսին էր այն միջավայրը, ուր հասակ առավ և ձևավորվեց Ստ. Շահբազյանը։

---

2 Тодор Белчов, Димитър Благоев в Пловдив (1885—1903 гг.), «Годишник на музеите в Пловдивски окръг». Държавно издателство «Наука и изкуство».

3 Տե՛ս Պլովդիվի «Отечествен глас» թերթի 1947 թ. հուլիսի 16-ի համարը։

4 Տե՛ս մեր «Տիգրան Բամիյան» հոդվածը «Վենինյան ուղիով» ամսագրի 1963 թ. N 1-ում։

Ստեփան Շահրապյանը ծնվել է 1883 թ. մայիսի 1-ին, Պլովդիվ քաղաքում, ծխախոտագործ (թյությունջի) բանվորի ընտանիքում։ Նրա հայրն իր ժամանակի առաջավոր բանվորներից էր, ծխախոտագործ բանվորների գործադուլների ակտիվ մասնակից, որի տունը բազմիցս հյուրընկալել և պատըսպարել է ռուսական քաղաքական էմիգրանտներին և անլեգալ գրականության թաքստոցներից մեկն է եղել։ Նկարագրելով Ստ. Շահրապյանի մանկությունն ու ընտանիքը, Դ. Մինասյանը գրում է. «Բանվորական ընտանիքի մեջ, ուր ամենօրյա հացի պայքարը ընտանիքի անրաժան ուղեկիցն էր, փոքրիկ Ստեփանը, տակավին երեխա, կրախի սոցիալական անարդարության և կլսե իր տանջված, բայց արիուն հոր ցասկոտ բողոքով լի խոսքերը»[6]։ 1892 թ. Ստ. Շահրապյանն ընդունվում է Պլովդիվի հայկական դպրոցը, իսկ 1896 թ. վերջանց գնահատականներով ավարտում այն[7] և նույն թվականին ընդունվում է Պլովդիվի արական գիմնազիան։ Ուսուցումն այս գիմնազիայում, որը քաղաքում հայանի էր իր «խռովարար» ոգով, շրջադարձային դեր է խաղում պատանի Ստեփանի աշխարհայացքի ձևավորման գործում։ 1894-ից մինչև 1897 թ., այսինքն Շահրապյանի գիմնազիա ընդունվելու շրջանում, այստեղ ուսուցչություն էր անում Դ. Բլագուևը, որն ավանդում էր Բուլգարիայի պատմություն, բուլգար և ռուսաց լեզուներ և որը 1897 թ. հեռացվեց գիմնազիայից ռևոլյուցիոն գործունեության համար[8]։

Գիմնազիայում վաղուց գոյություն ունեցող «Напредък» աշակերտական առաջադեմ խմբակը այդ շրջանում արդեն ամբողջապես գտնվում էր Դ. Բլագուևի ազդեցության ներքո և, ըստ էության, մարքսիստական, սոցիալիստական խմբակ էր, որտեղ ընթերցանության հիմնական նյութերից մեկը Դ. Բլագուևի աշխատություններն էին։ Այս խմբակը գոյություն ունեցավ մինչև 1903 թ.։ «Напредък» խմբակը ռևոլյուցիոն դպրոց դարձավ բուլգարական բանվորական և կոմունիստական շարժման ապագա գործիչների մի ամբողջ պլեադայի՝ Գ. Բակալովի, Իվ. Կլինչարովի, Գ. Բրոզևի, Ն. Մուկետարովի, Ն. Բլբրովի, Պ. Սավովի, Ն. Բոսպոդինովի և ուրիշների համար, որոնց մարտական ընկերը դարձավ նաև Ստ. Շահրապյանը։ Ընդունվելով գիմնազիա Ստ. Շահրապյանն անմիջապես ներգրավվում է այդ խմբակի մեջ, դառնում է նրա ամենաակտիվ անդամներից մեկը[10] և Դ. Բլագուևի աշակերտը լինելով, նրա անմիջական ազդեցությամբ, տարվում է մարքսիզմով ու սոցիալիզմով, հետագայում իր ամբողջ կյանքը նվիրելով բանվոր դասակարգի ազատագրության գործին։ Գիմնազիայում Ստեփան Շահրապյանը սովորեց ընդամենը չորս տարի՝ 1896-ից մինչև 1900 թ. և ստիպված եղավ նյութական ծանր պայմանների պատճառով թողնել ուսումը և աշխատանք որոնել։ Ստ. Շահրապյանը շատ ընդունակ մարդ էր. նա ազատ տիրապետում էր հայերեն, բուլգարերեն, թուրքերեն, ֆրանսերեն և ռուսերեն լեզուներին։ Դարձ ժամանակում նա ուսումնասիրում է հաշ-

---

5 Ружа Шахбазян, նշվ. հոդվ.։

6 Դերենկուհի Մինասյան, նշվ. հոդվ., էջ 28։

7 Նույն տեղում։

8 Х. Христов, К. Василев, Димитр Благоев (биографический очерк), Москва, Изд-во Иностранной литературы, 1958, էջ 35։

9 Այս խմբակի գործունեության մասին տե՛ս Цветана Тодорова, Първи стъпки на младежкото революционно движение в България, издателство на ЦК на ДКМС „Народна младеж", София, 1960

10 Тодор Белчов, նշվ. աշխ., էջ 32։

վապահությունը և աշխատանքի է անցնում առևտրական ձեռնարկություններում։ 1901 թ., տակավին 18 տարեկան, Ստ. Շահրապյանն արդեն ԲԲՍԴՊ անդամ էր։ Այդ տարեթիվն ապացուցվում է փաստացի տվյալներով, որովհետև 1901 թ. դեկտեմբեր ամսին Ստ. Շահրապյանը Դ. Բլագոևի անձնական երաշխավորությամբ ընդունվում է «Ռարոտնիկ» սպառողական կոոպերատիվի անդամ[11], որի վարչության նախագահն էր ինքը՝ Դ. Բլագոևը և որի անդամ կարող էին լինել միայն ԲԲՍԴՊ անդամները։ 1901—1903 թթ. Ստեփան Շահրապյանը պրոպագանդիստական և կազմակերպական ակտիվ աշխատանք է կատարում բանվորների և երիտասարդության շրջանում, մասնակցում է պարտիայի ընտրական պայքարին, անձամբ ղեկավարում է աշակերտական սոցիալիստական խմբակների աշխատանքը[12]։ Այդ տարիներին պարտիայի ներսում աճում էր պայքարը «յայն» («շիրոկի») սոցիալիստական՝ օպորտունիստական և «ենգ» («տեսնի») սոցիալիստական՝ ռևոլյուցիոն մարքսիստական հոսանքների միջև, որն ավարտվեց պարտիայի պառակտումով, 1903 թ. կայացած ԲԲՍԴՊ X համագումարում։ Պարտիան տրոհվեց «շիրոկի» սոցիալիստների և «տեսնի» սոցիալիստների. վերջինս կոչվեց Բուլղարական բանվորական («տեսնի սոցիալիստների») սոցիալ-դեմոկրատական պարտիա։ Այդ պայքարի սկզբից Ստ. Շահրապյանը հարեց «տեսնյակների» ռևոլյուցիոն թևին և մինչև կյանքի վերջը մնաց նրանց շարքերում։

1903 թ. սկսվում է բուլղարական բանվորական շարժման նոր վերելք, աճում է գործադուլային շարժումը։ Պարտիայի X համագումարը առանձնահատուկ նշանակություն է տալիս բանվորական արհմիութենական շարժմանը և հատուկ աշխատանք է ծավալվում այդ ուղղությամբ։ Ստեփան Շահրապյանը մեծ աշխատանք է սկսում արհմիություններ կազմակերպելու, մասնավորապես «յակմաջի» բանվորների և առևտրական ծառայողների արհմիություններ (սինդիկատներ) ստեղծելու ուղղությամբ։ Այդ տարիներին Ստ. Շահրապյանն արդեն Պլովդիվի բանվորների շրջանում ժողովրդայնություն վայելող և սիրված ղեկավարներից մեկն էր։ Նրա մարտական գինակիցը, բուլղարահայ աշխատավորների շրջանում ռևոլյուցիոն աշխատանքի ակտիվ կազմակերպիչներից մեկը՝ Գրիգոր Շիշմանյանը (Շիշկո) այդ շրջանի մասին գրում է՝ «... նա կարճ ժամանակում վայելում է բոլոր ազգությունների բանվորների սերն ու համակրանքը, որի համար նրանք հարգանքով «բարա» (հայր) էին անվանում նրան։ Այդ անունը, որպես պարտիական կնքծանուն, մնաց մինչև նրա կյանքի վերջը»[13]։

1904—1912 թթ. երկրում տեղի է ունենում բանվոր դասակարգի քանակական զգալի աճ և բանվորական շարժման անընդմեջ վերելք, հատկապես 1905—1907 թթ. ռուսական ռևոլյուցիայի ազդեցության ներքո։ Աճում են պարտիայի շարքերը։ Պարտիան հատուկ ուշադրություն է նվիրում արդյունաբերական պրոլետարիատի մեջ տարվող աշխատանքին և արդյունաբերական

---

11 Տե՛ս «Димитър Благоев—сборник от документи. 1875—1924». София. 1956. էջ 244—245։ «Протокол на годишното общо събрание на работническото кооперативно дружество», «Работник», № 129, 6/XII 1901.

12 Цветана Тодорова, Първи стъпки на младежкото революционно движение в България, էջ 54—55։

13 Գրիգոր Շիշմանյան, նշվ. հոդվ.

կենտրոններն է ուղարկում իր լավագույն դեկավարներին։ 1904 թ. ԲԲՍԴ (տ. ս.) Պ Կենտրոնական կոմիտեն Պլովդիվ է գործուղում բուլղարական պրոլետարիատի մարտական դեկավար Վասիլ Կոլարովին։ Կոլարովը մեծ աշխատանք է ծավալում քաղաքում։ Նրա անմիջական դեկավարության ներքո շարունակում են աճել և ձևավորվել Պլովդիվի պրոլետարիատի դեկավարները։ Բուլղար հեղինակ Ռ. Ֆիլիպովը այդ շրջանի մասին գրում է. «Նրա (Վ. Կոլարովի—Ռ. Խ.) շուրջն է համախմբվում և նրա անմիջական դեկավարության ներքո աճում է ինտելիգենտ և բանվորական կադրերի այնպիսի նվիրված մի պլեադա, որպիսին էին Նիկոլա Դոսպոդինովը, Պենչո Սավովը, Նիկոլա Ֆ. Գինևը, Նիկոլա Խր. Գլրբովը, Խալաչև եղբայրները, Ստեփան Շահբազյանը, Ստեֆան Քիրաջիևը և ուրիշներ, որոնցից շատերը հերոսաբար զոհվեցին սեպտեմբերյան էպոպեայի ժամանակ»[14]։ Ստեփան Շահբազյանը դառնում է Վասիլ Կոլարովի աշակերտն ու դինակիցը, նրանց միջև անձնական սերտ բարեկամություն է ստեղծվում։

Տեսնյակների պարտիան մեծ նշանակություն է տալիս Բուլղարիայում ապրող ազգային փոքրամասնությունների շրջանում տարվող աշխատանքին և նրանց համաբուլղարական բանվորական շարժման մեջ ներգրավելու գործին։ Առանձնապես մեծ նշանակություն է տալիս դրան Վ. Կոլարովը այնպիսի մի բազմազգ քաղաքում, որպիսին էր Պլովդիվը և որտեղ արդեն ազգային փոքրամասնություններից աճել էին Տիգրան (Չիչո) Բսմիյանը, հույն Արգիր Դեմիրովը՝ «Բայ Արգիրը» և մի շարք ուրիշ դեկավարներ։ Հիշելով հետագայում իր գործունեության Պլովդիվի շրջանը Վ. Կոլարովն ասում էր՝ «Մենք քաղաքական և լուսավորական լայն աշխատանք ծավալեցինք։ Մեզ էր պատկանում, եթե կարելի է այսպես արտահայտվել, սոցիալիստական պրոպագանդայի և գործունեության մենաշնորհը Պլովդիվում։ Մենք հաջողությամբ թափանցում էինք բնակչության համարյա բոլոր հասարակական խավերի մեջ։ Ինչպես արդեն ասացի, մենք կազմակերպեցինք անգամ թուրք բանվորներին, որոնք մայիսի 1-ին կարմիր ֆեսերով ցույցի դուրս եկան։ Մենք ընդգրկել էինք նաև կաթոլիկներին, հայերին, հույներին, կանանց»[15]։ Ինքը Վ. Կոլարովը լավ գիտեր ազգային փոքրամասնությունների աշխատավորների վիճակը։ Բուլղարիայում մինչև 1905 թ. գոյություն չուներ աշխատանքային ոչ մի օրենսդրություն։ Պլովդիվ գալով, Վ. Կոլարովն սկսեց ուսումնասիրել բանվորների աշխատանքի պայմանները և այդ պրոցեսում մոտիկից ծանոթացավ նաև հայ բանվորների վիճակին։ «Աշխատանքի ինսպեկցիան Պլովդիվում» հոդվածում Վ. Կոլարովը մանրամասն նկարագրել է Պլովդիվի մի շարք գործարանատերերի, այդ թվում հայերի՝ Մ. Թովմասյանի, Օ. Կուրրայյանի, Թամիրյանցի, Մ. Դոնիկյանի, Ա. Սինեմյանի, Նշանյան եղբայրների, Ս. Չորլույանի և մի շարք ուրիշների գործարաններում և ձեռնարկություններում տիրող վիճակը, որտեղ աշխատում էին նաև բազմաթիվ հայ բանվորներ։

Այդ տարիներին տեսնյակներն արդեն մեծ աշխատանք էին տանում նաև հայ աշխատավորության շրջանում։ Այդ աշխատանքին մասնակցում էին «տեսնյակների» պարտիայի հայ անդամները՝ Տիգրան Բսմիյանը, Արտաշես Մուրադ-

---

14 Русин Филипов, Предан син на народа (по случай 70-годишниката на Васил Коларов). *Տե՛ս* «Отечествен глас» *թերթի (Պլովդիվ) 1947 թ. հուլիսի 16-ի համարը։*

15 *Տե՛ս* «Отечествен глас», *1947, հուլիսի 16։*

յանը, Գառնիկ Թյությունջյանը, բիչ ավելի ուշ՝ Հրանտ Մոմջյանը, Գրիգոր Շիշմանյանը, Հարություն Մելքոնյանը, Ռուսեում—Արտաշես Ասլանյանը և շատ ուրիշներ։ Ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև հայերի մեջ մեծ աշխատանք էր կազմակերպում Պլովդիվի պարտիական ակումբը՝ հայտնի «Народен Дом»-ը։ Պարտիական ընդհանուր աշխատանքի հետ միասին, Ստեփան Շահրազյանը ղեկավարում է բուլղարահայ աշխատավորների մեջ տարվող աշխատանքը և դառնում բուլղարահայ գաղութի ռևոլյուցիոն շարժման ճանաչված մարտական դեկավարը։ 1909—1910 թթ. ԲԲՍԴ (տ. ս.)Պ ծավալելով իր աշխատանքը, բանվորական ավելի լայն մասսաները պարտիայի մեջ ընդգրկելու նպատակով սկսում է կազմակերպել «բանվորական լուսավորական միություններ», որոնց նպատակն էր աստիճանաբար ծանոթացնել բանվորներին սոցիալիստական ուսմունքի հետ և պատրաստել նրանց պարտիայի շարքերն ընդունվելու համար։ Նման խմբակներ ստեղծվում են նաև ազգային փոքրամասնությունների շրջանում՝ պրոպագանդիստական աշխատանքը նրանց մայրենի լեզվով կազմակերպելու և ավելի մատչելի դարձնելու նպատակով։ Այս առաջությամբ է, որ 1909 թ. Պլովդիվում, Ստեփան Շահրազյանի նախաձեռնությամբ ու ջանքերով կազմակերպվում է «Հայ բանվորական «Նոր հոսանք» լուսավորական խումբը»։ Ընտրվում է խմբի վարչություն, որի նախագահն է դառնում Ստեփան Շահրազյանը, քարտուղար՝ Գրիգոր Շիշմանյանը (Շիշկո), իսկ անդամներ՝ Տիգրան Խամիյանը, Արտաշես Մուրադյանը և Հրանտ Մոմջյանը։ Խումբը զգալի աշխատանք է ծավալում բուլղարահայության շրջանում։ Ուշադրության արժանի է այն փաստը, որ «Նոր հոսանք» խումբը հատուկ կոչ է հրապարակում ուղղված դաշնակցության և այլ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ և մի քանի հապար տիրաժով տարածում է այն։ «Նոր հոսանք» խումբը ուշագրավ երևույթ է գաղութահայության պատմության մեջ, որպես ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի առաջին բջիջներից մեկը սփյուռքում։

Ստեփան Շահրազյանի եռանդուն աշխատանքը պարտիայում, արհմիություններում, մասնավորապես հայ աշխատավորության շրջանում, նրա կրքոտ ելույթները «Народен Дом» պարտիական ակումբում դարձնում են նրան Պլովդիվի պրոլետարիատի ճանաչված դեկավարներից մեկը։ Նա բազմիցս ընտրվում է պարտիայի քաղաքային կոմիտեի անդամ։ Պլովդիվի պարտիական կազմակերպության մեջ Ստ. Շահրազյանի վայելած մեծ հեղինակության մասին է վկայում այն փաստը, որ նա բազմիցս ընտրվում է ԲԲՍԴ (տ. ս.) պարտիայի համագումարների դելեգատ Պլովդիվի պարտիական կազմակերպությունից։ 1906 թ. մինչև իր կյանքի վերջը Ստ. Շահրազյանը, որպես դելեգատ, մասնակցում է ԲԲՍԴ(տ. ս.)պարտիայի հետարյա բոլոր համագումարներին և ընտրվում է համագումարների դեկավար մարմինների մեջ։ Մենք տեսնում ենք Ստեփան Շահրազյանին որպես դելեգատ ԲԲՍԴ(տ. ս.)Պ-ի, 1906 թ. Ալիվեն քաղաքում կայացած տասներեքերորդ համագումարում։ Այստեղ նա ընտրվում է համագումարի քարտուղարության կազմում[16]։ ԲԲՍԴ(տ. ս.)Պ տասնհինգերորդ համագումարում, որը տեղի ունեցավ 1908 թ. Գար-

16 Տե՛ս «Българската Комунистическа партия в резолюции и решения на конгресите, конференциите и пленумите на ЦК. 1891—1918», Издателство на Българската Комунистическа партия, София, 1957, հատ. I, էջ 185։

բովո քաղաքում, Ստ. Շահրազյանը դարձյալ դելեգատների շարքում է և համագումարի քարտուղարության անդամ[17]։ 1911 թ. Պլովդիվում, պարտիայի տասնութերորդ համագումարում Ստ. Շահրազյանը դելեգատ է առևտրական ծառայողների կողմից և ընտրական հարցերով զբաղվող հանձնաժողովի անդամ, որի նախագահն է Դ. Բլագոևը[18]։ Ստ. Շահրազյանը, որպես դելեգատ, մասնակցում է 1912 թ. Ռուսե քաղաքում կայացած պարտիայի տասնիններորդ համագումարին և ընտրվում է համագումարի մանդատային հանձնաժողովի անդամ[19]։ 1914 թ. Ստ. Շահրազյանն ընտրվում է քսաներորդ համագումարի դելեգատ և այդ համագումարի քարտուղարության անդամ[20]։ 1915 թ. Սոֆիայում կայացած ԲԲՍԴ(տ. ս.)պարտիայի քսանմեկերորդ համագումարում մենք դարձյալ հանդիպում ենք Ստ. Շահրազյանի անվանը դելեգատների և Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ ստեղծված հանձնաժողովի կազմում[21]։

ԲԲՍԴ(տ. ս.)պարտիայի քսանմեկերորդ համագումարը տեղի ունեցավ այն մեծագույն ողբերգությունից հետո, որն ապրեց հայ ժողովուրդը Թուրքիայում 1915 թ.։ Ստ. Շահրազյանի կենսագրականի համար չափազանց կարևոր է այն փաստը, որ այս համագումարում Շահրազյանը մացնում և հիմնավորում է համագումարի կողմից ընդունված բողոքի հատուկ բանաձև «հայ ժողովրդին թուրքական բարբարոսական օլիգարխիայի կողմից ոչնչացնելու դեմ»[22]։

Այս կարևոր, պատմական գրականության մեջ մինչև այժմ չմեկնաբանված փաստաթուղթը մի անգամ ևս վկայում է բուլգարական բանվորական սոցիալ-դեմոկրատական (տեսնչականների) պարտիայի խոր ինտերնացիոնալիզմի մասին, պարտիայի, որը գործելով պատերազմի պայմաններում և այն ժամանակ Գերմանիայի ու Թուրքիայի զինակիցը հանդիսացող երկրում, բարձրացրեց իր ձայնը հայ ժողովրդի ոչնչացման քաղաքականության դեմ։ Այս փաստաթուղթը լույս է սփռում եվրոպական սոցիալ-դեմոկրատիայի ամենառևոլյուցիոն ջոկատներից մեկի՝ ԲԲՍԴ(տ. ս.)պարտիայի դիրքորոշման վրա այդ հարցում։

Բալկանյան պատերազմների և առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ստեփան Շահրազյանը գտնվում է ռազմաճակատում։ Այդ տարիներին տեսնչականների պարտիան մեծ աշխատանք է տանում ընդդեմ պատերազմի, ինտերնացիոնալիստական դիրքերից համարձակորեն պայքարելով բուլգարական բուրժուազիայի և միապետության ռազմական ավանտյուրաների քաղաքականության և սոցիալ-շովինիզմի դեմ։ Դրա հետ մեկտեղ ԲԲՍԴ(տ. ս.) Պ-ն ռևոլյուցիոն մեծ աշխատանք է կատարում ռազմաճակատում։ Ստեփան Շահրազյանը դառնում է այդ աշխատանքի ակտիվ մասնակիցներից և կազմակերպիչներից մեկը, շարունակելով կապ պահպանել պարտիայի ղեկավարների հետ։ Հենց նրան՝ «զինվոր Ստեփան Շահրազյանին» էր հասցեագրված Վասիլ Կոլարովի հայտնի նամակը, գրված Ստոկհոլմից 1917 թ. մայիսի 26-ին, որում նա, հատատ վստահություն հայտնելով ռևոլյուցիայի հաղթանակի անխուսափելիության նկատմամբ, գրում էր. «այստեղից աշխարհը մի քիչ այլ

17 Նույն տեղում, էջ 216, 217։
18 Նույն տեղում, էջ 259, 260։
19 Նույն տեղում, էջ 280։
20 Նույն տեղում, էջ 293, 294։
21 Նույն տեղում, էջ 307։
22 Նույն տեղում, էջ 326։

կերպ է երևում, մենք շտապում ենք, բայց բոլորը չէ, որ շտապում են։ Այնուամենայնիվ աշխարհը պտտվում է, և «նա» կդա»[23]։ Ստեփան Շահրապյանը մեծ աշխատանք է կատարում ռազմաճակատի զինվորների մեջ նրանց սիրելի թերթի՝ ԲԲՍԴ(տ. ս.)Պ մարտական օրգան «Работнически вестник»-ի տարածման գծով[24], ագիտացիոն աշխատանք է կատարում իր զորամասում, պարզաբանելով առաջին համաշխարհային պատերազմի իմպերիալիստական, ավազակային բնույթը, հակապատերազմական, ռևոլյուցիոն թռուցիկներ տարածելով ինչպես բուլգարական, այնպես էլ հակառակորդի բանակում։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Ստեփան Շահրապյանը ծառայում էր 28-րդ հետևակային գնդում, որտեղ Բորիս Դիշլիևի, Դիմիտր Կրախտովի, Ստոյչո Կոստանդինովի, Իվան Շախպարովի, Խրիստո Դիմիտրովի, Ստեփան Դիմիտրովի, Խրիստո Խալաչևի և մյուս տեսնյակների հետ միասին կազմակերպում էր ռևոլյուցիոն աշխատանք գնդում[25]։ Ստեփան Շահրապյանը ֆրանսերեն լեզվով թռուցիկներ է գրում, որոնք տարածվում են բուլգարական բանակի դեմ կռվող ֆրանսիական զորամասերում։ Բուլգարական տեսնյակները, ռուս բոլշևիկների օրինակով զինվորների «եղբայրացման» ուղղությամբ մեծ աշխատանք էին տանում։ Այդ աշխատանքը, մասնավորապես տարվում էր նաև 28-րդ գնդի դեմ կանգնած ֆրանսիական զորամասերում։ Այդ աշխատանքի մասնակիցներից մեկը, Խրիստո Խալաչևը, իր հուշերում գրում է. «Այն ժամանակ (1917 թ. սեպտեմբերերին) մեր դիմաց գտնվում էր ինչ-որ ֆրանսիական զորամաս։ Ընկեր Շահրապյանը գիտեր ֆրանսերեն և նա գրեց երկու նամակ նույն բովանդակությամբ։ Նամակներում գրում էինք մեր դեմ կանգնած ֆրանսիացի բարեկամներին, որ մենք, ինչպես և նրանք բանվորներ ու գյուղացիներ ենք, որ այս պատերազմը հակաժողովրդական է, որ անմտություն է վայրենաբար իրար կոտորելը մեր և նրանց իշխանավորների՝ կապիտալիստների շահերի համար, որ պատերազմին վերջ կտրվի միայն երկու կողմերի զինվորների ընդհանուր պայքարով—ճակատի երկու կողմերում՝ իրենց սեփական իշխանավորների ու կեղեքիչների դեմ—ինչ որ գործով ցույց տվեցին ռուս զինվորները»[26]։ Նամակում առաջարկվում էր դադարեցնել կրակը և հրամանատարությունից դատտնի զինվորների հանդիպում կազմակերպել։ Երկու նամակ էլ—ինչպես պատմում է Խ. Խալաչևը—անցկացվեցին ռազմաճակատի գծից և թաքցվեցին ֆրանսիական խրամատների առջև, բայց այնպես, որ նկատվեն զինվորների կողմից։ Պետք է ենթադրել, որ նամակները հասան ֆրանսիական զինվորներին, դրվհետև հետևյալ մի քանի օրվա ընթացքում ֆրանսիական կողմից կրակ չբացվեց, իսկ որոշ ժամանակ անց հրամանատարությունը փոխարինեց այս զորամասը գուավների գաղութային զորամասով։ Տեսնյակները ավելի ընդլայնեցին գնդում տարվող աշխատանքը։ Վերը թվարկած ընկերների հետ միասին Ստ. Շահրապյանը եղավ 28-րդ հետևակային գնդի հայտնի ապստամբության կազմակերպիչներից մեկը։ Այդ ապստամբությունը բուլգարական բանակում տեղի ունեցած ռևո-

23 Նամակի պատճենը մենք վերցրել ենք Սոֆիայի Վ. Կոլարովի տուն-թանգարանի ֆոնդից։

24 Ружа Шахбазян, նշվ. հոդվ.։

25 Христо Халачев, Бунтът в 28 пехотен полк. Записки на един редник от първата световна война през 1914—1918 гг., Издателство на Българската комунистическа партия, էջ 58։

26 Նույն տեղում, էջ 119։

ցյուցիոն աչքի ընկնող ելույթներից մեկն էր։ Իր ընկերների հետ միասին Ստ. Շահրազյանը, որպես ապստամբության ղեկավարներից մեկը, հանձնվում է ռազմական տրիբունալի դատին[27]։

Ավարտվում է առաջին համաշխարհային պատերազմը և Ստեփան Շահրազյանը, վերադառնալով ռազմաճակատից, ամբողջապես նվիրվում է ռևոլյուցիոն պարտիական աշխատանքին։ Պարտիայի Կենտրոնական կոմիտեն մեծ վստահություն է ցուցաբերում նրա նկատմամբ։ 1918 թ. Ստեփան Շահրազյանն ընտրվում է ԲԲՍԴ(տ. ս.)Պ Պլովդիվի քաղաքային պարտիական կազմակերպության քարտուղար, իսկ ավելի ուշ՝ նաև Պլովդիվի օկրուգային կոմիտեի քարտուղար։ Նա մեծ աշխատանք է սկսում ինչպես քաղաքում, այնպես էլ օկրուգի գյուղական բնակչության մեջ։

1919 թ. մարտ ամսին տեղի է ունենում ԲԿՊ առաջին՝ հիմնադիր համագումարը և ստեղծվում է Բուլղարական կոմունիստական պարտիան, որը դառնում է Կոմինտերնի մարտական սեկցիաներից մեկը։ Այդ նույն համագումարում Ստ. Շահրազյանն ընտրվում է ԲԿՊ Կենտրոնական կոմիտեի (Բարձրագույն պարտիական խորհրդի) անդամ[28] և շարունակում է աշխատանքը որպես ԲԿՊ Պլովդիվի կոմիտեի քարտուղար։

1918—1923 թթ. Ստեփան Շահրազյանի կյանքի և գործունեության ամենաեռանդուն և բեղմնավոր շրջանն էր։ Շահրազյանն արդեն լիովին ձևավորված, հասուն և պատրաստված պարտիական ղեկավար էր։

1919 թ. հունվար ամսին նշվում է Պլովդիվի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության 25-ամյակը։ Ստեփան Շահրազյանի նախագահությամբ «Народен Дом»-ում անց է կացվում հանդիսավոր հոբելյանական ժողով։ «Работнически вестник» թերթում հրապարակված է հոբելյանական ժողովի հեռագիրը Դ. Բլագոևին, որը ստորագրել է Ստ. Շահրազյանը։ Ողջունելով «սիրելի ուսուցչին և Պլովդիվի պարտիական կազմակերպության հիմնադրին», Ստ. Շահրազյանը, կոմունիզմի գործի հաղթանակի հավատով լի, գրում էր. «Սոցիալիստական սերմերը բուռն կերպով աճում են փոթորիկների մեջ, ծաղկում և հասունանում են նրանց պտուղները, երջանկացնելու համար Բուլղարիայի բանվոր դասակարգը»[29]։

1919 թ. նոյեմբերի 19-ին Պլովդիվում տեղի է ունենում աշխատավորների հայտնի ցույցը, որն այդ շրջանում երկրում տեղի ունեցած խոշորագույն քաղաքական ցույցերից մեկն էր։ Ստեփան Շահրազյանը Պենչո Սավովի, Իվան Ֆբսովի և Պլովդիվի պրոլետարիատի մյուս ղեկավարների հետ միասին այդ ցույցի և «Ջումայա» հրապարակում տեղի ունեցած հայտնի միտինգի կազմակերպիչներից ու ոգեշնչողներից մեկն էր։ Ստ. Շահրազյանը գրում է «Սիրելի ժողովուրդ» հայտնի թռուցիկը[30], որը ցույցի նախօրյակին հազարավոր օրինակներով տարածվում է ժողովրդի մեջ և կոչ է անում աշխատավորներին մասնակցել «Ջումայա» հրապարակում կայանալիք միտինգին։ Պենչո Սավովը կազմում է միտինգի բանաձևի նախագիծը։ Նոյեմբերի 19-ին Պլովդիվի

27 Նույն տեղում։

28 Մ. Իվանով, Առնական մարտիկ և հայրենասեր։

29 Տե՛ս «Работнически вестник» թերթի 1919 թ. հունվարի 11-ի համարը։

30 Тодор Белчов, Пенчо Савов. Биографичен очерк, Годишник на музеите в Пловдив, III, Държавно издателство «Христо Г. Данов», Пловдив, 1960, էջ 187։

բանվորներն ու աշխատավորները բազմաթիվ շարասյուներով շարժվում են դեպի «Ջումայա» հրապարակը։ Պլովդիվի տարբեր կողմերից դեպի հրապարակ շարժվող շարասյուները գլխավորում էին քաղաքի պարտիական ղեկավարները։ Քաղաքի բանվորական ամենամեծ թաղամասի՝ կայարանի շրջանի շարասյան գլուխն էին կանգնած Ստեփան Շահրադյանը և Պենչո Սավովը։ Ոստիկանությունը փորձում է խանգարել ցույցը, կրակ է բացում ցուցարարների վրա, սպանում ու վիրավորում է բազմաթիվ բանվորների։ Ցույցից հետո, Ստեփան Շահրադյանը, մյուս ղեկավարների հետ միասին, ենթարկվում է ոստիկանության հալածանքներին[31]։

1918—1923 թթ. Ստեփան Շահրադյանի համար ընորոշվում են եռանդուն աշխատանքով նաև բուլղարահայ աշխատավորության շրջանում՝ մի աշխատանք, որ կատարվում էր ԲԿՊ Կենտրոնական կոմիտեի ուղղակի ցուցումով։ Ստեփան Շահրադյանի գործունեության այդ կողմը կարևոր նշանակություն ունի, քանի որ մենք այժմ կարող ենք որոշակիորեն ասել, որ նրա անվան հետ է անմիջականորեն կապվում սփյուռքահայ կոմունիստական առաջին խմբերի և արտասահմանյան հայ կոմունիստական մամուլի հիմնադրումը։ Իրավացի է բուլղար պատմաբան Մ. Իվանովը, երբ գրում է, որ «մեծ են Ստ. Շահրադյանի ծառայությունները բուլղարահայ փոքրամասնության հեղափոխական պայքարներուն մեջ։ Այն երկար տարիներ կաշխատի հայ աշխատավորներու դասակարգային գիտակցության բարձրացման, անոնց կազմակերպման համար»[32]։ 1918 թ. ռազմաճակատից վերադառնալով, Ստեփան Շահրադյանը, ընդհանուր պատասխանատու պարտիական աշխատանքի հետ մեկտեղ, հատուկ աշխատանք է սկսում բուլղարահայ գաղութի մեջ։

Բուլղարական պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի ընդհանուր վերելքը, որը տեղի ունեցավ Մեծ Հոկտեմբերի անմիջական ազդեցության ներքո, դասակարգային պայքարի հետագա սրումը երկրում, բերեցին բուլղարահայ աշխատավորների գիտակցության հետագա աճ և ակտիվացրին նրանց մասնակցությունը համաբուլղարական բանվորական ռևոլյուցիոն շարժմանը։

Հայկական բուրժուա-նացիոնալիստական պարտիաները Բուլղարիայում, թունավորելով հայ աշխատավորների գիտակցությունը, ամեն կերպ ձգտում էին բթացնել նրանց դասակարգային զգոնությունը, վերցնել իրենց ազդեցության տակ, հեռու պահել նրանց երկրում ծավալվող դասակարգային պայքարին մասնակցելուց։ Բուլղարական կոմունիստական պարտիան մեծ աշխատանք է սկսում երկրի ազգային փոքրամասնությունների, այդ թվում հայերի շրջանում։ Այդ ամբողջ աշխատանքի ղեկավարն ու կազմակերպիչն է դառնում Ստեփան Շահրադյանը տեսնյակների պարտիայի հայ վետերանների և բուլղարահայության շարքերից ելած երիտասարդ կոմունիստների հետ միասին։ Դեռ 1918 թ. վերջին, ինչպես գրում է Գրիգոր Շիշմանյանը (Շիշկո), Վ. Կոլարովի առաջարկով «մի քանի պարտիական ընկերներ Պլովդիվում՝ Ստեփան Շահրադյանի գլխավորությամբ, նախաձեռնություն վերցրին կազմակերպելու հատուկ աշխատանք բուլղարահայ աշխատավորության շարքերում»[33]։ 1919 թ.

31 Ружа Шахбазян. Նշվ. հոդվ.։

32 Մ. Իվանով, Առնական մարտիկ և հայրենասեր։

33 Գ. Շիշմանյան (Շիշկո), Հիշողություններ Ստ. Շահրազյանի մասին, ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆոնդ № 4055, ցուցակ № 1, գործ 6, թ. 14։

Պլովդիվում Ստեփան Շահրազյանի ղեկավարությամբ կազմակերպվում է «Հայ բանվորական կոմունիստական ինքնազարգացման միություն»-ը՝ հայ աշխատավորների մեջ կոմունիստական գաղափարներ տարածելու և նրանց շարքերում ռևոլյուցիոն աշխատանք տանելու նպատակով։ 1919 թ. հուլիս ամսին այդ «Միությունը» հրապարակում և տարածում է սիյուռքահայության կյանքում կարևոր պատմական նշանակություն ունեցող մի փաստաթուղթ՝ աշխարհի բոլոր հայ բանվորներին և աշխատավորներին ուղղված «Կոչ»-ը, որի հեղինակն էր Ստեփան Շահրազյանը[34]։

Այս փաստաթուղթը վկայում է, որ նրա հեղինակը հասուն մարքսիստ էր, տեսական բարձր պատրաստության պարտիական ղեկավար, որը կարողանում էր ստեղծագործորեն կիրառել մարքսիզմը հայկական կոնկրետ իրականության վերլուծության համար։ «Կոչ»-ում հետևողական մարքսիստական դիրքերից մերկացվում էին կապիտալիստական հասարակարգը և հայ բուրժուանացիոնալիստական պարտիաները։ «Կոչ»-ը հայ աշխատավորության առաջ խնդիր էր դնում համախմբվել Կոմինտերնի և կոմունիստական դրոշի շուրջը, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի շուրջը։ Արդեն 1919 թ. «Կոչ»-ում որոշակի նշվում էր, որ հայ ժողովրդի ապատագրումը հնարավոր է միայն Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի ստեղծման պայմաններում։

1920 թ. հունվար ամսին, Ստեփան Շահրազյանի անմիջական ղեկավարությամբ, մշակվում է երկրորդ կարևոր քաղաքական փաստաթուղթը՝ «Հայ բանվորական կոմունիստական ինքնազարգացման միության» «Շրջաբերական թիվ 1»-ը, որի մեջ ձևակերպված են բուլղարահայերի շրջանում տարվող աշխատանքի հիմնական քաղաքական սկզբունքները[35]։ Այս փաստաթղթում, մասնավորապես, սուր քննադատության էր ենթարկվում և մինչև վերջ մերկացվում դաշնակցական պարտիայի և դաշնակցական կառավարության ավանտյուրիստական քաղաքականությունը և խոր հավատ էր հայտնվում Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի նկատմամբ։

1919—1920 թթ. Ստեփան Շահրազյանի ղեկավարությամբ բուլղարահայ գաղութում մեծ աշխատանք է տարվում հայկական կոմունիստական խմբեր ստեղծելու, հայերեն կոմունիստական թռուցիկներ և կոչեր տարածելու, ինչպես նաև հայկական կոմունիստական պարբերական մամուլ ստեղծելու ուղղությամբ։ 1920 թ. բուլղարահայերի մեջ տարվող բանավոր և տպագիր կոմունիստական պրոպագանդայի գործը ղեկավարելու համար ԲԿՊ Կենտկոմի և անձամբ Վ. Կոլարովի ցուցումով Պլովդիվում ստեղծվում է կենտրոնական հատուկ օրգան՝ «Մամուլի կոմիտե»[36], որի նախագահ է ընտրվում Ստեփան Շահրազյանը։ «Մամուլի կոմիտեն», ԲԿՊ Կենտկոմի օգնությամբ, ձեռնարկում է մեծ գործ՝ հայկական կոմունիստական թերթի ստեղծումը։ Կոմիտեի եռանդուն աշխատանքի և Ստ. Շահրազյանի ջանքերի հետևանքով, 1920 թ. հուլիսի 15-ին Պլովդիվում լույս է տեսնում սիյուռքահայ կոմունիստական առաջին թերթը՝ «Կարմիր լուրեր»-ը, իսկ այնուհետև, 1922 թ.՝ «Նոր աշխարհ»-ը։ Երկու թերթն էլ Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի հայե-

34 «Կոչ»-ը տե՛ս Բուլղարական կենտրոնական պարտիական արխիվ (ԿՊԱ—Սոֆիա), ֆոնդ. № 3, ցուցակ № 4, արխ. միավոր № 7, թթ. 16—23։

35 Տե՛ս նույն տեղում, թթ. 2—9։

36 Ружа Шахбазян, նշվ. հոդվ.։

րեն օրգաններն էին։ Ստ. Շահրազյանը այդ մարտական օրգանների խմբագիրն էր։ Նրա գրչին են պատկանում այդ թերթերում հրապարակված մի շարք հոդվածներ։ Նա հանդես է եկել նաև բազմաթիվ հոդվածներով բուլղարական պարտիական մամուլում։ «Կարմիր լուրեր» թերթի առաջին իսկ համարում 1920 թ. հուլիսի 15-ին տպագրված է Ստ. Շահրազյանի գրչին պատկանող «Մեր խոսքը» ծրագրային առաջնորդողը։ Ծավալով փոքր այս հոդվածում տրվում էր միջազգային կյանքի, համաշխարհային պրոլետարիատի ռևոլյուցիոն պայքարի և հայ պրոլետարիատի ու աշխատավորության առաջ կանգնած խնդիրների սեղմ, մարքսիստական ճիշտ վերլուծությունը։

Բնութագրելով մարդկության կյանքում տեղի ունեցած շրջադարձը, Շահրազյանը գրում էր, որ «Կարմիր լուրեր» ասպարեզ կելլա բոպե մը, երբ համաշխարհային իմպերիալիստական պատերազմը բացավ սոցիալական հեղափոխության մեծ շրջանը» և որոշակի նշում էր, որ «ամեն երկրի պրոլետարիատի մոտավոր անհետաձգելի գործն է կազմակերպել երկրին բոլոր հեղափոխական ուժերը՝ քաղաքական իշխանությունը գրավելու և սոցիալիզմը իրագործելու նպատակով»։

1920—21 թթ. Ստեփան Շահրազյանը մեծ աշխատանք է տանում բուլղարահայ գաղութի բոլոր ռևոլյուցիոն ուժերը ԲԿՊ-ի շուրջը համախմբելու, հայկական կոմունիստական խմբերի կազմակերպման ձևավորումն ավարտելու և նրանց աշխատանքը կոորդինացնելու ու կենտրոնացնելու համար։ Այդ նպատակով 1921 թ. փետրվար ամսին Պլովդիվում անց է կացվում բուլղարահայ առաջին կոմունիստական կոնֆերանսը։ Կոնֆերանսի աշխատանքը ղեկավարում է Ստեփան Շահրազյանը։ Որպես նախագահ բացելով կոնֆերանսը, Ստ. Շահրազյանը կանգ է առնում Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի վրա։ Նա նշում է, որ հայ ժողովուրդը, երկար տարիների տանջանքներից և մեծ զոհերից հետո ձեռք բերեց այդ հաղթանակը, որովհետև Հոկտեմբերյան մեծ ռևոլյուցիայի ազդեցության ներքո նա գնաց Կոմինտերնի նշած ուղիով[37]։ Խոսելով այն պայմանների մասին, որոնցում տեղի է ունենում կոնֆերանսը և նշելով կոնֆերանսի քննարկմանը ենթակա հարցերը, Շահրազյանը որպես առաջնահերթ խնդիր առաջ է քաշում բուլղարահայ աշխատավորների մեջ տարվող կոմունիստական ագիտացիայի ու պրոպագանդայի հետագա ընդլայնման անհրաժեշտությունը։ Կոնֆերանսն ավարտվելուց հետո նրա արդյունքների լուսաբանումով բուլղարական պարտիական մամուլում հանդես եկավ Ստ. Շահրազյանը[38]։ Կոնֆերանսն ընտրեց «Մամուլի կոմիտեի» նոր կազմ, որը նորից գլխավորեց Ստեփան Շահրազյանը։

Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում ոգեշնչող գործոն դարձավ սփյուռքահայ կոմունիստների համար։ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի լուրը խանդավառությամբ ընդունեց Ստ. Շահրազյանը և իրեն հատուկ եռանդով ձեռնարկեց ու գլխավորեց բուլղարահայ գաղութում Սովետական Հայաստանի պրոպագանդայի, նրան օգնություն կազմակերպելու և ներգաղթի գործը։

---

37 Տե՛ս կոնֆերանսի արձանագրությունները, Բուլղարական կենտրոնական պարտիական արխիվ (ԿՊԱ-Սոֆիա), ֆ. 3, ց. 1, արխ. մ. 14, թ. 1։

38 Տե՛ս Նրա „Първата арменска комунистическа конференция в България" հոդվածը «Работнически вестник» թերթի 1921 թ. փետրվարի 23-ի համարում։

Բուլղարական կոմունիստական պարտիան այդ տարիներին մեծ աշխատանք էր կատարում Սովետական Ռուսաստանի սովյալներին եղբայրական օգնություն կազմակերպելու ուղղությամբ։ Աշխատանք ծավալվեց նաև Սովետական Հայաստանին օգնություն ցույց տալու համար։ ԲԿՊ ղեկավարության ներքո գործող «Освобождение» բանվորական կոոպերատիվը 1921 թ. հավաքեց հացահատիկ, տարբեր սննդամթերքներ և այլ նվերներ Մերձվոլգայի շրջաններին և Հայաստանի բնակչությանը օգնելու համար և 1921 թ. վերջին հատուկ շոգենավով ուղարկեց այդ նվերները Բաթում՝ Ռուսաստանին և Հայաստանին հանձնելու համար։ Բուլղարական կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի և «Освобождение» կոոպերացիայի որոշումով այդ նվերները հանձնելու համար Ռուսաստան և Հայաստան գործուղվեցին ԲԿՊ Կենտկոմի անդամներ Նիկոլա Պենևը և Ստեփան Շահրազյանը[39]։ Այդ ուղևորության մասնակից Դիմո Շիվարովը գրում է, որ Ստեփան Շահրազյանը «հատուկ միսիայով մեզ հետ միասին մեկնեց Սովետական Հայաստան»[40]։

Այսպիսով, Ստեփան Շահրազյանն առաջին սիյուռքահայ կոմունիստ գործիչն էր, որ պաշտոնապես այցելեց Հայաստան, որպես եղբայրական կոմունիստական պարտիայի ներկայացուցիչ։ Բաթումում Ստ. Շահրազյանը հանձնում է նվերները, գալիս է Թբիլիսի, իսկ այնուհետև՝ Երևան, ուր մնում է մոտ երկու ամիս և ծանոթանում Հայաստանում սկսված վերածննդին։

Սովետահայ մամուլում պահպանվել է Ստ. Շահրազյանի այս այցելության մեկ ուշադրավ վկայությունը։ 1921 թ. դեկտեմբեր ամսին Ստ. Շահրազյանը հանդես է գալիս «Խորհրդային Հայաստան» թերթում Բուլղարական կոմունիստական պարտիային նվիրված ծավալուն հոդվածով[41]։ Այս հոդվածում Ստ. Շահրազյանը տալիս է ԲԿՊ-ի պատմական ուղու վերլուծությունը, նշելով, որ «Ռուսական սոցիալիստական մտքի ազդեցության ներքո ծագում է առել նաև բուլղարական սոցիալիստական միտքը»։ Նա տեղեկություններ է տալիս հայկական կոմունիստական խմբերի և «Կարմիր լուրեր» թերթի մասին, մանրամասն ծանոթացնում է հայ ընթերցողին ԲԿՊ-ի կառուցվածքի և ընթացիկ աշխատանքի հետ։ ԲԿՊ-ի գործի նկատմամբ հավատով լի Ստ. Շահրազյանն ավարտում է հոդվածը հետևյալ բառերով. «Բուլգ. կոմ. կուսակցությունը պիտի շարունակի իր գծած ճանապարհը և պիտի պայքարի իր բոլոր ուժերով մինչև որ Բուլգարիայի մեջ ևս հաստատվեն Սովետական կարգեր ու ռեժիմ»։

Դաշնակները չէին ուզում, որ Ստ. Շահրազյանը վերադառնա Բուլգարիա։ Նրանց ձեռնտու չէր, որ գաղութում լինի մեկը, և այն էլ Շահրազյանի պես մարդ, որն իր աչքով տեսել էր վերածնվող Հայաստանը։ Ահա ինչու Հայաստանից Բուլգարիա վերադառնալու ճանապարհին, Կոստանդնուպոլսում, դաշնակները փորձում են մահափորձ կազմակերպել նրա դեմ։ Սակայն տեղական կոմունիստների օգնությամբ Շահրազյանը փրկվում է դաշնակների տեռորից և 1922 թ. սկզբին բարեհաջող վերադառնում է Բուլգարիա։ Այստեղ նա ականատեսի ոգևորությամբ ելույթներ է ունենում հրապարակային ժողովներում,

---

39 Գրիգոր Շիշմանյան, Ստեփան Շահրազյան (մահվան 35-ամյակի առթիվ)։

40 Димо Шиваров, Братска помощь, տե՛ս «17-та година. Спомени на Българска революционери за Октомврийската революция и отражението и у нас», Издателство на Българската комунистическа партия, София, 1957, էջ 352։

41 Տե՛ս Ստ. Շահրազյանի «Բուլգարական կոմունիստական կուսակցությունը» հոդվածը, «Խորհրդային Հայաստան», 1921, դեկտեմբերի 23։

միտինգներում և մամուլում[42], պատմում Սովետական Հայաստանի մասին։ Դրա պատճառով նա ենթարկվում է ինչպես պաշտոնական իշխանությունների, այնպես էլ դաշնակ ավանտյուրիստների հալածանքին։

Բուլղարահայ կոմունիստների երկրորդ կոնֆերանսում, որը տեղի ունեցավ 1922 թ. հունիսի 4—5-ին, դելեգատները լսեցին Ստ. Շահրազյանի զեկուցումը Հայաստան կատարած իր այցելության մասին[43]։

Սովետական Հայաստանի պրոպագանդան Ստ. Շահրազյանը սերտորեն շաղկապում է բուրժուա-նացիոնալիստական ուժերի և առաջին հերթին կոնտրռևոլյուցիոն դաշնակցության մերկացման հետ։ Սովետական Հայաստանի այցելությանը նվիրված իր հոդվածում նա գրում էր. «Դաշնակցությունը» Հայաստանի մեջ մեռած է, իսկ արտասահմանի մեջ սկսած է անոր մահացման պրոցեսը, զոր մենք, արտասահմանի հայ կոմունիստներս, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի բոլոր անկեղծ բարեկամները, պետք է արագացնենք, որպեսզի այս ազգադավաճան կուսակցությունը նույնպես և արտասահմանի մեջ մեռյալ դիակ մը դառնա»[44]։

1922—23 թթ. Բուլղարիայում տեղի է ունենում դասակարգային պայքարի հետագա ուժեղացում, շարունակվում է Բուլղարական կոմունիստական պարտիայի հեղինակության աճը։ Բուլղարական բուրժուազիան երկրի ֆաշիզացման ուղին է բռնում, սկսում է կոնտրռևոլյուցիոն հեղաշրջում նախապատրաստել։ Այդ տարիներին Ստ. Շահրազյանը մարտական դիրքերում է, ամբողջապես կլանված է ռևոլյուցիոն պայքարով երկրում գլուխ բարձրացնող ֆաշիզմի դեմ, ոգեշնչում և մոբիլիզացնում է աշխատավորներին պայքարելու հանուն սոցիալիզմի հաղթանակի։ Իր վերջին հոդվածներից մեկում, «Նոր աշխարհ» թերթի 1923 թ. մայիսմեկյան համարում, Ստ. Շահրազյանը գրում էր. «Պատերազմեն վերջ հեղափոխական շրջանի ալիքները և որոտումը, որ մոխրի դարձուցին երկրորդ Ինտերնացիոնալը, վերստին կենդանություն տվին մայիս մեկիս, որուն հեղափոխական բովանդակությունը խորապես ըմբռնված է այլևս երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալի դրոշին տակ համախմբված և քալող ճնշված բոլոր ազգերու կողմե։ Բուրժուական ընկերությունը իր վերջին ժամերը կապրի, կը մեռնի նաև անոր գործիքը—երկրորդ Ինտերնացիոնալը։

Անոնց փոխարեն կը ծնին և կը զարգանան Խորհրդային իշխանությունը և անոր ամենասուր զենքը եղող երրորդ Կոմունիստական Ինտերնացիոնալը։

Կեցցե՛ Խորհրդային իշխանությունը։

Կեցցե՛ Երրորդ Ինտերնացիոնալի մայիսի 1-ը»։

1923 թ. հունիսի 9-ին Բուլղարիայում տեղի ունեցավ պետական հեղաշրջում, որն իրականացրեց ռեակցիոն բուրժուազիան։ Իշխանության գլուխ անցավ Ցանկովի ֆաշիստական կլիկը։ Կառավարությունն արգելեց կոմունիստական թերթերը և վայրենի հալածանքներ սկսեց կոմունիստների նկատմամբ։ ԲԿՊ սկսում է պրոլետարիատի զինված ապստամբություն նախապատրաստել ֆաշիստական դիկտատուրայի դեմ։ Ստ. Շահրազյանը քաղաքի պարտիական մյուս ղեկավարների հետ լարված աշխատանք է տանում այդ ուղղությամբ։

42 Տե՛ս «Նոր աշխարհ», 1922, № 2 և ուրիշներ։

43 Տե՛ս Բուլղարական կենտրոնական պարտիական արխիվ (ԿՊԱ—Սոֆիա), ֆոնդ № 3, ցուցակ № 1, արխ. միավոր № 24, թ. 2։ Կոնֆերանսում Ստ. Շահրազյանի բացակայության պատճառով նրա զեկուցումը ընթերցեց Գր. Շիշմանյանը։

44 «Նոր աշխարհ», 1922, № 2։

Ցանկովի կառավարությունը որոշում է գլխատել պրոլետարիատին՝ ամենուրեք բանտարկելով ու մեկուսացնելով նրա ղեկավարներին։ 1923 թ. սեպտեմբերյան հերոսական ապստամբության նախօրյակին սկսվում են պարտիայի ղեկավարների և ակտիվ կոմունիստների մասսայական ձերբակալություններ։ Ձերբակալվում են նաև Պլովդիվի պարտիական կազմակերպության համարյա բոլոր ղեկավարները։

1923 թ. սեպտեմբերի 11-ի լույս 12-ի գիշերը քաղաքում տեղի է ունենում պարտիական կարևոր ժողով։ Ժողովից տուն վերադառնալով, գիշերվա ժամը 3-ին Շահբազյանը ձերբակալվում է։ Նրան պահում են ժանդարմերիայում, ապա տեղափոխում բանտ, իսկ սեպտեմբերի 26-ի լույս 27-ի գիշերը գաղտնի դուրս են բերում Պլովդիվից և դեպի Պոլիս տանող խճուղու վրա, Կեմերա վայրում, գազանարար սպանում են քաղաքի տասնմեկ կոմունիստ ընկերների հետ։

Այդ գիշեր Ստեփան Շահբազյանի հետ զոհվեցին նրա մարտական ընկերները՝ Նիկոլա Գլըրովը, Պենչո Սավովը, Նիկոլա Կովաչևը, Կոստանդին Գեչևը, Խրիստո Գենկովը, Սոլոմոն Մոլխովը, Տրիֆոն Իլիևը, Ստոյան Բայաջիևը, Անգել Շիշկովը, Խենրիխ Խերշկովիչը և Ասեն Իգնատովը[45]։ Մինչև կյանքի վերջին րոպեները, մինչև վերջին շունչը Ստեփան Շահբազյանը հավատարիմ մնաց պարտիայի և բանվոր դասակարգի գործին, այն ուղուն, որի վրա ոտք էր դրել իր գիտակցական կյանքի առաջին իսկ օրերից։ «Կոմունիստ եղել եմ, կոմունիստ էլ կմեռնեմ»—այս բառերով ավարտվեց պարտիայի աննկուն մարտիկի քառասնամյա կյանքի ուղին։

1947 թ. իր 70-ամյակի առիթով այցելելով Պլովդիվ, Վասիլ Կոլարովը հանդիպում ունեցավ տեղական պարտիական ակտիվի հետ, հիշեց իր աշակերտներին ու գինակիցներին և նորից բարձր գնահատական տվեց Ստեփան Շահբազյանին։ Բնութագրելով Պլովդիվի պրոլետարիատի տաղանդավոր ղեկավարներ Նիկ. Գոսպոդինովին և Ստեֆան Քիրաջիևին Կոլարովն ասաց. «Ականավոր պարտիական և քաղաքական գործիչներ էին նույնպես՝ Ստեփան Շահբազյանը, Պենչո Սավովը, Բրայկո Լուկովը, Ստեփան Դիշլիևը, Պենչո Տոդորովը, Վասիլ Գորանովը, Արգիր Դեմիրովը, Ջիչո Իսմիյանը՝ հայ, Գլըրովը՝ Պլովդիվի առաջին կոմունիստ քաղաքագլուխը և ուրիշներ»[46]։

Պլովդիվի աշխատավորները բարձր են պահում Ստեփան Շահբազյանի հիշատակը։ Նրա անունով է կոչված քաղաքի հրապարակներից մեկը։ 1955 թ. հունիսի 2-ին Ստեփան Շահբազյանի և նրա տասնմեկ ընկերների գնդակահարման վայրում, ԲԿՊ ղեկավար աշխատողների և արտասահմանյան հյուրերի ներկայությամբ, տեղի ունեցավ նրանց հիշատակին նվիրված հուշարձանի բացումը։ «Պլովդիվ» ամսագիրը այդ առթիվ գրեց. «Այս հուշարձանը հիշեցնում է սերունդներին, որ պետք է սրբությամբ պահպանել այն մեծ գործը, որին ծառայեցին և որի համար իրենց կյանքը տվին ժողովրդի այս արժանի զավակները»[47]։

---

45 Տե՛ս «Верни на народа синове» հոդվածը «Пловдив» ամսագրում, 1955, № 4, էջ 4—5։

46 Տե՛ս «Отечествен глас», 1947, հուլիսի 16։

47 Տե՛ս «Верни на народа синове» հոդվածը «Пловдив» ամսագրում, 1955, № 3, էջ 3—4։

## СТЕПАН ШАХБАЗЯН

(К 80-летию со дня рождения)

Р. Г. ХАЧАТРЯН

(Резюме)

Мужественный борец болгарского рабочего и коммунистического движения Степан Шахбазян является учеником Д. Благоева и В. Коларова, соратником славных руководителей пловдивского пролетариата — Н. Господинова, Ст. Кираджиева, П. Савова, Б. Лукова, Ст. Дишлиева, П. Тодорова, В. Горанова, А. Демирова, Н. Глыбова, Н. Гинева и других.

Ст. Шахбазян родился 1 мая 1883 г. в г. Пловдиве. С юных лет он находился под влиянием Дм. Благоева и стал участником революционного движения; с 1901 г.— член БРСДП, а с 1903 г. состоял в партии тесняков и являлся активным деятелем профсоюзного движения. Избран делегатом XIII, XV, XVIII, XIX, XX, XXI съездов БРСДП (т. с.). В 1912—1918 гг. он проводит революционную работу на фронте. По окончании войны Шахбазян на руководящей партийной работе — секретарь Пловдивского городского и окружного комитетов партии. В 1919 г. на Первом съезде БКП он избирается членом Высшего Партийного Совета. БКП проводила большую работу среди национальных меньшинств страны по их интернациональному воспитанию и вовлечению в революционное движение болгарского пролетариата. Эту работу среди трудящихся армян возглавлял Ст. Шахбазян. В 1919 г. он, по указанию ЦК БКП, возглавил созданный в Пловдиве «Армянский рабочий коммунистический союз». Ст. Шахбазян пишет известное «Обращение» этого союза ко всем трудящимся армянам за рубежом, руководит работой армянских коммунистических групп, а в 1920 г. избирается председателем «Комитета печати», созданного по указанию В. Коларова для работы среди трудящихся армян. В феврале 1921 г. Шахбазян руководит работой Первой конференции армянских коммунистов Болгарии. В результате его усилий в июле 1920 г. выходит первая армянская коммунистическая газета за рубежом «Кармир лурер», а в 1922 г.— газета «Нор ашхар». Обе газеты являлись органами БКП. Шахбазян являлся их редактором. В 1921 г. Шахбазян, по заданию ЦК БКП, посещает Советскую Армению. Вернувшись в Болгарию, проводит энергичную работу по оказанию помощи Советской Армении, пропагандируя ее новый путь и разоблачая армянские буржуазно-националистические партии. Высокую оценку деятельности Ст. Шахбазяна дал В. Коларов.

Ст. Шахбазян расстрелян в сентябре 1923 г. бандами фашистского правительства Цанкова в числе многих руководителей пловдивского пролетариата.